Դ· ՏԱՐԻ ԹԻՒ 967 ՈՒՐԲԱԹ 11 ՄԱՅԻՍ 1879

ԼՐԱԳԻՐ

ՏՆՕՐԷՆ ԽՄԲԱԳԻՐ
ԵՒ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՆԻԿ· Մ· ԹԻՒԼՊԵՆՏՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ
Ղալաթիա Բէրչէմպէ Բազար Խորէ խանի դէմը Սամուր փողոց թիւ 12

ԱԶԳԱՅԻՆ

ԹԵՐԹԸ 20ՓԲ· ՄԵԹԱԼԻՔ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ուխէքլում
Կ· Պօլսոյ համար

Տարեկան	ղրշ·	100
Վեցամսեայ	»	50
Եռամսեայ	»	25

Գաւառաց համար

Տարեկան	ղրշ·	150
Վեցամսեայ	»	75
Եռամսեայ	»	40

Օտար երկիր տրկն. 40 Ֆրք·

ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄՆ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Սոյն խորագրով հետեւեալ յօդուածը, զոր Զմիւռնիոյ Արեւելեան Մամուլ, իր վերջին Ապրիլի ամսահանդէսին մէջ կը հրատարակէ, սոյն խնդրոյն ներկայումս գրեթէ ճիշդ մեր տեսակէտին համաձայն գրուած լինելով, զայն ևս մեր ընթերցողաց ուշադրութեանը ներկայացնելու նպատակաւ՝ հարկ և արժան կ՚համարիմք մաս առ մաս մեք ևս յառաջ բերել։

Ա.

« . . . Պերլինի դաշնագրութիւնն, որ Արեւելեան խնդիրը լուծելու գործիք մը պիտի լինէր, ի՞նչ գործադրութիւն ու արդիւնք ունեցաւ։ Իր կեանքը կ՚համապատասխանէ ծննդեան։ Բռնի զօրութեան ծնունդ, երեք կայսերաց միութեան պտուղ, բռնութեամբ պիտի ապրէր ու արեամբ պիտի սնանէր։ Միակողմանի արդարութիւնն անոր էութիւն տուեր էր, հարկաւ միակողմանի գործադրութեամբ պիտի շունչ առնէր։ Հետեւապէս չէ թէ խաղաղութիւն և անդորրութիւն, այլ անկարգութիւն, ապստամբութիւն, անբնական երկրային բաժանում, կռիւ, արիւն, վերանորոգումներու անորոշ խոստումներ և կիսկատար լուծումներ պիտի բերէր վեհաժողովն. եւրոպ. Թուրքիոյ մէջ, գրեթէ անտես առնելով ասիական գաւառները, որոց բարեկարգութեան պատասխանատուութիւնն 61րդ յօդուածով Բ. Դրան վրայ թողուց՝ և Անկլօ-Թրքական պայմանագրին յանյեայն հաւանութիւն տալով՝ ապագայ կնճիռներու հանդիսատես լինելու պատրաստուեցաւ. մինչ իր միջամտութիւնն ու աջակցութիւնը վերապահելով՝ աւելի խոլխոտ աւելի անհանդարտ ժողովրդոց համար։ Ուրեմն՝ ինչպէս պատերազմի, նոյնպէս խաղաղութեան տեւն զէնքը պիտի խօսէր, կամբանակներու վրայ կռթընած քաղաքականութիւնը պիտի գործէր, այնպէս որ Պերլինի դաշնագրութեան ոգւոյն հետ տառն ալ այլափոխի և Պալքաններու վրայ իբրապէս ռուսական դրօշակը ծածանի։ Այս շփոթ քաղաքական խնդիրներու առջև ի՞նչ պիտի ընէր Հայը, իր շահերն ի՞նչպէս պիտի պաշտպանէր։ Այս էր մեզի համար նկատելու կարեւոր խնդիրը։ Հայը՝ թէ և ներքուստ դժգոհ՝ վեհաժողովին ծնած 61րդ յօդուածն առ երեսս խնդութեամբ կարդաց և անկից Հայաստանի՝ եթէ ոչ ինքնօրինութեան դէթ վերանորոգման յոյս և գործադրութեան ապահովութիւն մը հանելու ջանաց։ Կ՚դիտէր որ՝ թէ և միջազգային նոր օրէնքի մը մէջ Հայաստան բաւական կարեւորութիւն ստացած էր, սակայն միւս կողմէ յԱնկլօ-Թրքական պայմանագրին ներգործութեամբ 61րդ յօդուածը կ՚չէզոքանար, և դժուարին ու կնճռոտ քաղաքական խնդիրներ ոչ միայն Անգղիոյ այլ և Թուրքիոյ ուշադրութիւնն Հայաստանէ զատ՝ ամեն կողմն պիտի դարձնէր։ Այս դժուարութեանց մէջ՝ Հայաստանի տառապանաց հետ հարստահարութիւններն՝ հին և կրօնական ոխակալութեանց արդիւնք, պիտի աւելնային և Բ. Դրան հրամանները՝ արդարակորով պաշտօնեաներու նուազութեան, ելմտական նեղութեան ժամանակ՝ անկարող պիտի լինէին գաւառայնոց չգանգատներուն վերջ տալ։ Այս ծանր վիճակին ուրիշ կնճիռ մ՚ևս աւելցաւ։

Ուլնիոյ կարծեցեալ ապստամբական շարժման լուրը ոչ միայն կառավարութեան արդէն կասկածոտ միտքը պղտորեց և քրդաց դժգոհութիւն պատճառեց, այլ և առհասարակ թշնամի տարրներու ատելութեան ու աւարառութեան ոգին գրգռեց Հայոց դէմ, և նոր նոր անիրաւութեանց ու ոճիրներու տեղի տալով՝ ներգործեց նաև վերանորոգման խնդրոյն վրայ։ Սակայն այս ծուղակ մ՚էր որ կ՚լարուէր անշուշտ Հայոց դէմ, դարաւոր թշնամի մը կ՚ջանար գաղտնի միջոցներով անոնց նոր յոյսերն ի դերեւ հանել, տէրութեան կասկածներն անոնց վրայ գրգռել և լեռ մ՚որ առանձին ու հանդարտ կացութիւն մը կ՚վայելէր, կործանել, ի հարկին վերանորոգման գործըն երկարաձգել տալով։ Այս ամբաստանութիւնն՝ որու առջև չէին կարող անտարբեր մնալ Հայք, հին խնդրոյ մը հետ, Սսոյ Աթոռոյն վերաշինութեան խնդրոյն հետ, վերաբերութիւն ունէր։ Սսոյ Աթոռն անապատ դարձնելու համար ճգնող ձեռքեր՝ կ՚ուզէին անշուշտ անոր վրայ նայող լեռն ալ դղրդել, թէև պարագաները կ՚խօսէին ի նպաստ Հայոց, թէ և բացայայտ էր որ՝ Պերլինի դաշնագրութենէ ետք՝ Հայոց կողմէ ապստամբական շարժում մը չէ թէ միայն ծանր յանցանք մը այլ և յիմարութիւն մ՚էր. սակայն հայ մամուլն հասարակաց կարծիքն և Ս. Պատրիարքն առ Բ. Դուռ բողոքելով ցոյց տուին որ Ուլնիոյ ապստամբութիւն ըսուածը պարզապէս մէկ քանի հայատեաց ազդեցութեանց գործն է։ Բ. Դուռն կ՚խոստանայ արդարութեամբ շարժիլ, խնդիրը քննութեան ենթարկել. մինչդեռ շատ անմեղներ կ՚բանտարկուէին, յանկործական մահուամբ կ՚մեռնին, և միայն մէկ քանի կալանաւորներ Ս. Պատրիարքին կը յանձնուին։ Օտար տէրութեանց մէկ քանի դեսպաններ իրենց անտարբերութիւնը կ՚թօթուեն, բայց Պ. Լէյըրտ բաւական ազդեցութիւն ունի՝ ինչպէս հարստահարութեանց խնդրոյն մէջ՝ նոյնպէս Ուլնիոյ նկատմամբ՝ որ և է միջամտութիւն ապարդիւն հանելու, կարծես թէ նոյն միջոցին բարենորոգումներու խնդիրը կ՚մոռցուի։ Ամենուն ուշը գրաւող բանն Ուլնիոյ վիճակն է, որ թէ և կարեւորութեան ու անմիջական պաշտպանութեան արժանի, բայց պարագայից բերմամբ՝ լինելիք ընդհանուր վերանորոգութեան սահմանին մէջ պիտի մտնէր։

Վանայ առաջնորդ Երեմիա եպիսկոպոսին նկատմամբ, գերմանացի վախճանելոյն մարմինը հայոց գերեզմանատնէն ներս չընդունելուն առթիւ, կրօնժողովոյ տուած վճիռը յայտնի է ընթերցողաց, որ էր հրաժարեցնելով զինքը յառաջնորդութենէ. Կտուց անապատի վանքը ղրկել յապաշխարութիւն։

Կիմանամք այս անգամ թէ Ս. Պատրիարք Հօր առաջարկութեանը վրայ՝ Դիմաքսեան գեր. Տ. Հմայեակ վարդապետին՝ Վանայ առաջնորդական տեղապահ կարգուելու պէտքը խնդիր եղած է վարչութեան մէջ։

Իսկ ամենէն զարմանալին սա է թէ, Վանէն մտերս ժողովրդական հանրագրութիւն մը հասած է ի Պատրիարքարան ի նպաստ Երեմիա սրբազանի, որով գերմանացի մեռելոյն Հայոց գերեզմանատան մէջ չը թաղելուն իբր արդարացուցման փաստ՝ յառաջ կ՚բերեն գերմանացւոյն բողոքական ըլլալը, իսկ իրենց այդ փաստն ի-

բենք կ'ջրեն երբ կըսեն միևնոյն հանրագրին մէջ թէ՝ գերմանացին իր վերջին վայրկենին մէջ հաղորդուեր և մեռնելէն ետքն ալ թաղման կարգ կատարուեր է հայ քահանայից ձեռօք, իսկ բողոքական ըլլալուն համար՝ գերեզմանատան մէջ թաղել չեն ուզեր։

Զենք հասկնար թէ երբ մարդ հայ քահանայի մը ձեռօք կը կ'հաղորդուի և վրան թաղման կարգ կ'կատարուի, ալ այնուհետև ի՞նչ բան կ'պակսի իրեն Հայոց գերեզմանատան մէջ թաղուելու։

Շիտակն ըսելու համար՝ վանեցիական կամ երեմիական սոյն տրամաբանութեան կամ՝ փաստաբանութեան մեր խելքը այնքան դիւրաբաշ չհասնիր։

Ս. Փրկչի ազգ. հիւանդանոցի տարեդարձի հանդէսը խիստ շքեղութեամբ կատարուեցաւ երէկ՝ ի ներկայութեան հազարաւոր ժողովրդեան երկու սեռէ ալ։

Ս. Պատրիարքը պատարագը մատուցանելէն յետոյ, հանդերձ եկեղեցականօք և դպրօք Հիւանդանոցի ընդունելութեան սենեակն ելաւ, ուր ներկայ կը գտնուէին արդէն պատ. Հոգաբարձութեանք հրաւէրին անձամբ պատասխանող երեւելի տղայինք, որք ժամանակ ունեցեր էին յիշեալ ազգ. պատգարանին ամեն յարկերն ալ միառմի աչքէ անցնելով, տօքթ. Ռափայէլեանի առաջնորդութեամբ, տեսնել ու վկայել ամեն ուրեք տիրած մաքրութիւնը, կանոնաւորութիւնն ու բարեկարգ վիճակը։

Փոքր ինչ հանգիստ առնուելէն յետոյ, յատուկ հրաւիրեալ հանդիսականք սեղանի ի՛ջան, ուր պարզ բայց ընտիր ճաշ մը պատրաստուած էր։ Հրաւիրեալք 150ի չափ անձինք։ Ս. Պատրիարք հօր նախագահութեամբը սեղան բազմեցան, ուր Ս. Պատրիարքին, Հիւանդանոցի Հոգաբարձութեան եւ Ազգին կենացը, որ գիտէ իւր բարեպաշտական հաստատութեանցը ոստարել, բաժակներ առաջարկուեցան, առանց ատենաբանութեան, ճաշին աւարտմանն ալ Իսուսֆեան էֆ. Հիւանդանոցի հիմնադիր Պէզճեան Ամիրայի յիշատակն օրհնել առաջարկեց, և ապա հլան սեղանէն։

Հանդիսականք մեկնելէն առաջ՝ ի նպաստ Փրկչի հիւանդանոցի հանգանակութեան տումարին մէջ 140 ոսկւոյ չափ գումար մ'ստորագրեցին, 5 ոսկի Ս. Պատրիարք Հայրը, 20ական ոսկի Սրվբ. և Սարգիս Կիւլպէնկեան էֆէնտիք, 8. և Մ. Լուսաեան էֆէնտիք, 8ական. Կիւմիշեան էֆ. 10 ոսկի Պ. Գաբրիէլեան էֆ. 5ական ոսկի Գ. Օտեան և Ա. Ունճեան էֆէնտիք, 3 ոսկի Սրգ. Թաշճեան էֆ. 2ական ոսկի Խումարեան, Իսուսֆեան և Մամճեան Միք. էֆք. 1 և կէս կէս ոսկի ալ այլ և այլ հանդիսականք. նաև 30 1/2 ոսկի ալ Ղալաթիոյ սենեկապետ էֆէնտիներն, ընկերանալով մաքսատան և նաւամատոյցի յարգոյ բեռնակիր եղբարց հետ, պատգամաւորութեան մը ձեռօք նպաստ մը յղած էին վասն Փրկչի Հիւանդանոցին և ի քաջալերութիւն պատ. հոգաբարձութեան։

Զմոռնանք ըսել նաև թէ, երէկուան հանդիսին՝ Հոգաբարձութեան աջակցող օգնական մասնախմբին պատուարժան անդամոց ջանիւքն ալ թէ պարտիզին դրան և թէ Հիւանդանոցի դրան հանգանակութենէն 130 ոսկւոյ չափ հասութիւն գումար մը հաւաքուած էր, որով Հիւանդանոցի երէկուան հասոյթը 260–280 ոսկւոյ գումարի մը հասնիլ կ'կարծուի։

Ապա Ս. Պատրիարքը հանդիսականօք հանդերձ վարժարանին այցելութիւն մը տուաւ, ուր երդերով ընդունուեցան, և Ց. Ոսկան էֆ. ալ ի դիմաց Հոգաբարձութեան, իմաստասիրից և ճարտարախօս ատենաբանութիւն մը կարդաց դրաւոր, բազմաթիւ ցերմաջերմ ծափահարութեամբ ընդմիջուելով, յորում Հոգաբարձութեան շնորհակալութիւնը յայտնելով, Հիւանդանոցի Հիմնադրին յիշատակին, սմա օգնող բարերարանձանց և Հոգաբարձութեան համար Ս. Պատրիարքը հօր օրհնութիւնը կ'հայցեր։

Ս. Պատրիարքը ոտքի ելնելով օրհնեց Պէզճեանի յիշատակը; ազգին բարերարները, սոցա նպատակը արդիւնաւորելու համար ոգւով չափ աշխատող Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը, որու յերկնից կօրհնութիւն և յաջողութիւն մաղթեց, և թագաւորաց թագաւորէն լոյս և իմաստութիւն խնդրեց շնորհել Սուլթան Ազիզ—իւլ—Համիտ կայսեր, ներկայ տագնապներէն իւր կայսրութիւնն անվնաս ազատելու, որով և Հայոց ազգն ալ սիրոյ և միաբանութեան կապով մ'ամրացեալ, բարեբաղդութիւն ունենայ վայելել այն բարօրութիւնն ու քաղաքական անդորր կեանքը և ապրի, զի արժանի է ապրելու, և որում Ն. Օրբաղնութիւնն ինքն լի յուսով և վստահ լինելն յայտարարելով, յորդորեց զԱզգն ալ որ սա ևս միևնոյն յոյսն և վստահութիւնը ունենայ, և օրհնելով յարկն ու պատսպարեալքն և բոլոր ժողովուրդը, անտի պարտէզն իջաւ, և ժամու մը չափ ալ հոն կենալէն յետոյ մեկնեցաւ։ Հոգաբարձութեան և ժողովրդեան շնորհակալութիւնն ու գոհունակութիւնը ընդ իւր ի միասին տանելով։

Ս. Պատրիարքը ազգ. Հիւանդանոցէն մեկնելէն ետքը, պատ. Հոգաբարձութեան մի քանի անդամոց և քանի մը ազգային երեւելեաց հետ ի միասին, Բունաց հիւանդանոցն ու յիմարանոցը այցելութեան երթալով, յոյն հոգաբարձութեան կողմանէ մեծ պատուով և սիրայիր մեծարանօքը ընդունուեցան, և հարկ եղած պատուասիրութիւնը մատուցուելէն յետոյ, հոգաբարձութեան առաջնորդութեամբը բոլոր յարկերն ալ միառմի շրջելով և աչքէ անցընելով, գոհունակութեամբ բաժնուեցան։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Լոնտրա 21 մայ.

Նիպրոսի կառավարիչ Սըր Կարնէթ Ուլսլէյ այսօր հոս հասաւ։

Լոնտրայի պաշտօնական թերթը զինուորական 4 ոգւոյց Ասիոյ անպտղական հիւպատոսանուանումներն կ'հրատարակէ։

22 մայ.—Արեւ.-Բումէլիոյ Պուլկարիոյ հետ միացնելու համար կազմուած սլավեան ընկերութիւնը՝ Սոֆիոյի զօրապետին ձեռօքը յրուելու որոշումը Պուլկարաց Էկզարքին ազդեցութեամբը տեղի ունեցեր է կըսեն Թայմզ։

Վիէննա 21 մայիս

Պաթէմպէրկի իշխանը երէկ երեկոյ Վիէննա հասաւ։

22.—Վիէննայի ռուս. դեսպանը պաշտօնապէս հաղորդեց Աւստր. կառավարութեան թէ. յլ. Ին Արև.-Բումէլին ամբողջ պարպուած պիտի ըլլայ։

Ս.-Բէթէրսպուրկ 21 մայիս

Ռուսիոյ ոստիկանութեան վերատեսուչ Տրէնթէլէն զօրապետն սպաննել փորձող անձը ձերբակալուեցաւ։

Ֆիլիպէ 20 մայ.

Խոսել մը գիւղացիք այսօր պուլկարաց դպրոցը հաւաքուելով բռնուած քաղաքականութեան դէմ, և Փիւսաքօֆ գընդապետին ազդ. երկրապահ զօրաց հրամանատար անուանումը խնդրելու համար, ցոյց մ'ըրին որոյ մէջ պուլկար պատուաւորներէն մէկն ալ չկար։

21 մայ.—Օպրուչէֆ զօրապետը Հասքէօյէն հոս վերադառնալով այսօր, պուլկար երեւելեաց ժողովը դիմաբերց։ Զօրապետը փաղը կ. Պոլիս պիտի դառնայ։ Սոֆիոյին զօրապետը՝ Ալէքսաչային հանձնելէն այսինքն կիրակիէն առաջ հոսկէ պիտի մեկնի։ Այս առտուընէ ի վեր ռուսական դրօշակներն վար առնուեցան։ Երէկ ցոյց մ'ընելով Փիւսաքօֆ գընդապետը ազգ. զօրաց հրամանատար ուզող ամբոխին կողմէն պատգամաւորութիւն մ'այսօր Սոֆիոյին զօրապետին դիմեց, ուր և Վիթտիս բաշա ալ ներկայ կ'գտնուէր։ Պատգամաւորութիւնը փաշային տուած բացատրութենէն գոհ ըլլալով, խօսք տուին որ զիրար համոզեն։

Ա.յս առաւօտ հասած

Վիէննա 22.—Պաթէմպէրկի իշխանը Անտրասի կոմսին հետ երկար տեսակցութիւն մ'ունեցաւ։ Իշխանը Պուլկարիա հասնելուն՝ յայտարարութիւն մը պիտի հանէ Պերլինի դաշնագրին գործադրութիւնը պատուիրելով։

Լոնտրա 22.—Աղէկսանդրիոյ անգլ. հիւպատոս Պ. Վիվիէն խնդրեց իր կառավարութենէն որ պատերազմական 2 նաւ դրկէ Եգիպտոսի ջրերուն մէջ կենալու համար։

Հարկ. Լոնտրայի մէջ սըր Նորթ քոթ հարցման մը պատասխանելով յայտնեց թէ՝ չէ կրնար դեռ Ցունաստանի սահմանագլխոց վերաբերեալ բանակցութեանց մանրամասնութիւնքը հաղորդել, բաւ թէ՝ անգլ. կառավարութիւնը իւր բոլոր ազդեցութիւնն ի գործ դրեր է, հարկադրելու համար զՌ. Դուռն որ Գէրլինի Քոնկրէսին պատուէրն ընդունի։

ԴՐԱՄԱԿԱՆ

Այս առաւօտ բացուեցաւ	12·23
Ռումէլի	48·25
Թղթադրամ	1095·00
Պղինձ	165·00

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Արեւել. Ռումէլիի եւրոպայանձնաժողովոյ այս գլ. աւուր նիստին մէջ, գաւառին սահմանադրութեան և Ալէքսաչայի կառավարութեան վաւերացումն ու հաստատութիւնը հաղորդուեր է պաշտօնապէս վեհ. Սուլթանին կողմէն։

—Վաղբթ կըսէ թէ երէկ երեկոյ Ռ. Դրան մատուցուեր է օսմ. փոխառութեան նոր ծրագիր մը։ զոր Սըր Լէյարտ ալ կ'ջատագովէ եղեր։ ⁂—Ատենապետ փոխառութեան խօսքոնին անցնինք, տեսնենք ինչպէս կըլլայ։

—Կրէտէի կուսակալ Ֆօթիատիս բաշա առ ժամանակեայ բացակայութեամբ, երէկ մայրաքաղաքս հասաւ։

—Ռուս. բանակն Այսթէֆանօ և Լարնէ գտնուած տեղն, պաշար տուող և անվճար մնացող վաճառականք երէկ հեռագիր մ'ուղղեր են Լիվատիա Զարին, իրենց առնելիքին վճարումը խնդրելու։

—Ֆիլիպէի մէջ մէկ քանի խառվարարաց թելադրութեամբը Ֆիլիպէի մետրապոլիտին տունը և Մարիցա թերթին խմբագրատան առջեւը հակակրական ցոյցեր բնող պուլկարները մետրապոլիտին խորհրդոցն անսալով, որ զիրենք խոհական բլլալ կ'խրատեր, հաւաներ են Ուղերձ մ'ստորագրել առ կայսրը Ռուսաց, ի պատասխանի Օպրուչէֆ զօրապետին բերած յայտարարութեանը։

—Ռուսիոյ կայսեր կենացը դէմ դաւաճանող Սոլովիէֆի վերաբերեալ հետեւեալ մանրամասնութիւնքը կ'հաղորդուին եւրոպ. լրագրաց։

Մարդասպանը բանտը նետուելուն պէս, ոստիկանութեան վերատեսուչ Տրէնթէլէն զօրապետը զանի իր առջեւը բերել կ'տայ, առաջին հարցաքննութիւնը նախ ինքն ընելու համար։ Սոլովիէֆ հիւանդ և խոշտանգուած լինելով, կըսէ թէ պատասխանելու անկարող վիճակի մէջ է։ Իւր բանտարկութեան սկիզբէն մինչև չարաթ՝ զինքը հարցաքննել ուզողներուն չպատասխանելու յամառութեանը վրայ պինդ կը կենայ։

«Իմ ըրածիս դատաստանը տեսնելն ոչ թէ ձեզ, այլ ապագային՝ պատմութեանը կ'պատկանի» կըսէր, իսկ վերջէն Սօլօվիէֆ տեսակ մը մելամաղձոտութեան մէջ իյնալով, և հարցաքննութեան տանջանքներէն ալ ձանձրանալով, հուսկ ուրեմն կ'զիջանի ինչ ինչ խոստովանութիւններ ընելու, և կ'յայտնէ թէ մէկ քանի բաներ ունի յայտնելիք։

Նախ և առաջ Քիէվյի իւր 15 մեղսակիցները թերան կ'տայ, որք անմիջապէս կ'ձերբակալուին։ իսկ Բէթէրսպուրկի մէջ մինակ մէկ հոգի մը կ'մատնէ, Պուքիէվից անուն մէկը, Ջուրօֆ զօրապետին մօտագոյն օգնականներէն մին, որ Տրէնթէյէն զօրապետին կենացը դէմ փորձուած դաւաճանութեան հեղինակն է եղեր։ Ցետոյ կ'խոստովանի թէ այն Ընկերութիւնը, որոյ ինքը կանդամակցի, իւր հրամանները Ճինէվրայէն (Զուիցերիա) կստանայ։ Վերջապէս կ'յայտնէ Նիհիլիսթներուն որոշած բոլոր ըլանը՝ եթէ Զարին դէմ կատարուած դաւաճանութիւնը յաջողէր։

Այն ըլանը, չիտակն ըսելու համար, խիստ մեծ յանդգնութեամբ յղացուած ըլան մ'է. Ն'յիշեն թէ Սօլօվիէֆ, Զարին դէմ կրակ ըրած միջոցին, տէրութեան պաշտօնավարի համազգեստ և վրայէն ալ ժէժէ մը հագած էր։ Երբ կայսրն սպաննուէր, Նիհիլիսթներուն դիտաւորութիւնն է եղեր իսկոյն լուր տարածել ժողովրդեան մէջ թէ Զարը նոյնիսկ իւր պաշտօնավարաց ձեռօքն սպաննուած է, և այս կերպիւ ստորին կարգի ժողովրդեան գլուխն անցնելով, կայսեր վրէժն առնելու պատրուակաւ, պիտի սկսին եղեր բոլոր պաշտօնական անձինքը թրէ անցնելու կոտորածի մ'սկսիլ, ճիշդ երկրորդ Սէն-Պարթէլըմի մը Ս. Բէթէրսպուրկի մէջ։

Սօլօվիէֆ ըսեր է նաև, ինքզինքն արդարացնելու համար թէ, վիճակաւ ինքը որոշուած ըլլալով, եթէ չուզէր Զարին վըրայ կրակ ընել, անշուշտ իւր ընկերակիցներէն պիտի սպաննուէր։ ինքն անձամբ չէ յղացեր այս սպանութեան խորհուրդը, և կերպիւ մ'ալ իր կամքին հակառակ է եղեր, ուստի և կ'հաւատայ թէ, ինքը լաւ նշան առնող մ'ըլլալով, դիտմամբ Զարին վրայ կրակ ըրած ատենը՝ նպատակին չէ զարկեր։

Իսկ ուրիշ տեղեկութիւններ ալ կըսեն թէ, Սօլօվիէվ քննութեան մէջ երբ հարցուեր է իրեն թէ՝ վիճակա՞ւ որոշուած էր ինքը կայսեր վրայ կրակ ընելու համար, և թէ որո՞նք էին այդ վիճակը ձգողներն և իւր մեղսակիցներն, հետևեալ պատասխաններն տուեր է։

—Ի՞նչ էր նպատակդ այդ դաւաճանութիւնը գործելով, հարցեր է Լէօնթիէֆ դատարանին ատենապետը։

—Կայսրն սպաննել էր, կը պատասխանէ Սօլօվիէֆ։

—Ինչո՞ւ համար։

—Ինչու որ չուզեր մարդկային արժանաւորութեան համաձայն վարչութեան եղանակ մը տալ ռուս ժողովրդեան։

—Մեղսակից ունի՞ս։

—Այո։

—Որո՞նք են։

—Այն Ռուսերն, որք ինծի պէս բռնապետութիւնը (տէսբօթիզմ) կատեն և կ'զարշին։

—Ի՞նչ է անուննին։

—Անկարելի է գտնալ, այնքան բազմաթիւ են որ . . .

Սօլօվիէֆ վերջէն խոստովանութիւններ ընել ընել չհարկադրուելու համար, ինքզինքն սպաննել փորձեր է բանտին մէջ, որոյ վրայ արդէն իսկ բաճկոն հագցուցեր են իրեն, որ կարգելու իրեն անդամներն ուզածին պէս շարժելու, մինակ կ'վախցուի եղեր որ չըլնէ ակռայներովը բազկին շնչերակը կտրելով, կամ գլուխը բանտին պատերուն դէմ զարնելով ջախջախմամբ ինքզինքն սպաննէ, որոյ համար մասնաւոր հսկողութիւն կըլլուի եղեր։

—Վերջին կիր. օր ժամը 7ին Իզմիր հասնող բեռնարարձ կառախումբը, կայարանին մօտ բաժանման (մագաս) տեղը, գըծէն շեղելով. շոգեկառքին հետ 3 վակօն ալ դուրս իյնալով գետինը կ'խրեն, դուրս հազիւ 3–4 ժամէն հանելով նորէն իրենց տեղը կ'դնեն։ Անձի վնաս չէ պատահեր, մինակ մէկուն թևը քիչ մը վնասուեր է։ գծին նորոգութիւնէն տեսնուեր է որ ամբողջ Բօլդէյ-ները (գծին ներքևի փայտէ կոճղերն) վերջին աստիճանի փտտած են եղեր։

ԱԶԴ.—Արմաշ գնացող ուխտաւորաց դիւրութեանն ու հանգստութեանն համար կ'ծանուցուի թէ Իզմիտի կայարանին ճիշդ դէմը յատուկ պանդոկ մը վարձուած է, հայազգի պատուաւոր անձի մը տնօրէնութեանը ներքև, ուր մաքուր անկողին և կերակուր պատրաստ կ'գտնուի ամեն ժամանակ, և ուր ուխտաւորաց պէտք ունեցած կամ ուզած ամեն բան և ամեն դիւրութիւն ու հանգստութիւն տրուելու համար բնաւ ոևէ ջանք և խնամք զըլացուած չէ։

Ուխտաւորք մեծապէս գոհ պիտի ըլլան եթէ փոխանակ ուրիշ տեղեր դիմելու, յիշեալ պանդոկն իջևանին, մանաւանդ որ երկաթուղւոյ կառախումբն ալ դրեթէ գիշերուան ժամը 1ն անցած կ'հասնի Իզմիտի կայարանը, ուստի և ուխտաւորք ալ մեծ դիւրութիւն ունեցած կըլլան անմիջապէս յիշեալ պանդոկն իջնելու, ուր իրենց տանը պէս հանգիստ ըլլալնուն վրայ կրնան ապահով ըլլալ։

ԼՕԺԷՆ ՍԻՒ

ԴԻԽԱԲՆԱԿ ԲԼՈՒՐ

Թարգմանեաց
Ս. Ղուկասեան

«Թափառական Հրեայի» անուանի հեղինակին խիստ հետաքրքրաշարժ մէկ վէպն է, որուն թատերգը քանի մը տարի առաջ Կէտիկ փաշայի Թատրոնին մէջ ներկայացուելով, մեծ ընդունելութիւն գտաւ Արգոյ հասարակութենէն։

Գործը երկու հատորէ կ'բաղկանայ, որուն առաջինը Իզմիրէն հասած ըլլալով կը ծախուի Եէնի-Ճամի Ջիլինկիրլէր ճատտէսի Թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը։

Գին երկու ֆրանք

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՏԷՏԷԵԱՆ

ԺՕԶԷՖ ՊԱԼՍԱՄՕ

ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՆԱՐԱԳՆԵՏ ԷՖ. ԽԱՉՄԱՃԵԱՆ

Աղէքսանդր Տիւմա գաղղիացի մեծանուն վիպասանին գրչէն ելած սոյն գործին 8րդ այն է վերջին հատորն ալ Իզմիրի Տէտէեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայուելով Պոլիս հասած է։ Այս գեղեցիկ վէպին մէջ ուր Լուի ԺԵ·ի կեանքը, վարքն ու վախճանը նկարագրուած են, հետզհետէ կ'ներկայանան Վոլթէռ եւ Ռուսօ՝ անցեալ դարուն այն երկու մեծ մարդիկը, Թագուն գիտութիւններ կ'յայտնուին, Մասոնաց օթեակները ստարին առջև կ'բացուին։ Ամեն կարգի և հասակի մարդ իւր սիրած նիւթը հոն կ'գտնէ ևլն։

Կը ծախուի Եէնի Ճամի Ջիլինկիրլէր ճատտէսի Թիւ 2 Ս. Ղուկասեան գրատունը և ուրիշ գրավաճառաց քով։

Գին 2 ֆրանք 25 սաթ.

ՓԱՆԱՍԷ

Կոչուած ցաւի դեղը բոլորովին բուսեղէններէ բաղադրուած ըլլալով թէ՝ ներսէն և թէ՝ դուրսէն կը գործածուի ու բազմաթիւ ցաւեր ու հիւանդութիւններ շուտով կը բժշկէ, ինչպէս որ վարը յիշուած է։

Ամեն տեսակ Քօլի, Ըստամոքսի, մէջքի կամ Աղիքներու ցաւեր. ու նաև Թանչք, Քօլէրա և այլ ամառուան հիւանդութիւններ ունեցողները այս դեղէն խմելու են հետեւեալ կերպով։ Կէս գաւաթ ջուրի մէջ, դիր ապուրի մը դրգալէն աւելի շաքար, վրան լեցուր անուշի դրգալ մը Փանասէ աղէկ մը խառնէ ու խմէ։

Կոկորդի հիւանդութեանց, և Ուռեցքի համար դեղը վերոյիշեալ կերպով պատրաստէ ու ժամը կամ երկու ժամը հեղ մը՝ մէկ. կամ երկու անուշի դրգալ այն բաղադրութենէն խմէ։ Յօդացաւի, Ռիւմաթիզմի, Ոտքի ցաւի, Ստամոքսի ու տեսակ տեսակ կռնակի ցաւերու համար դուրսէն փանասէ քսելով աղէկ մը շփելու է։ Ակռայի ցաւի համար քիչ մը բամպակ փանասէի մէջ թաթխելով ցաւած ակռային վրայ դնելու է։

Ամեն տաեն երբոր ցաւի մը համար դուրսէն փանասէ քսել հարկ կըլլայ, եթէ քիչ մը ալ խմուի աւելի շուտ բժշկութիւն կըլլայ։

Մարմնոյ այրուած կամ ճմլուած տեղերը բժշկելու համար վտանգը պատահածին պէս փանասէէն վրան աղէկ մը լեցնելու է։ Դանակով ևլն. կտրուած վէրքերը բժշկելու համար՝ սրբելը չորցած շուտով մը վէրքը կապելու և գապին վրայէն փանասէ լեցնելու է մինչև որ լաւ մը թրջի։ Փանասէն նաև արեան շրջանը կարգադրէ ու բոլոր բնութիւնը կը զօրացնէ։

Այս դեղին օգտակարութեանը վրայ երկարօ էն գրել աւելորդ կը համարեմք, գործածողները զայն միշտ կը գովեն, ուզողը կրնայ անձամբ փորձել. գինն աժան է։ Կը ծախուի Մրնասեան և Ընկերաց Ամերիկեան վաճառատունը որ ի Ղալաթիա Կ. Պոլսոյ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԳԻՏԵԼԻՔ ՈՒ ՊԱՐՏԻՔ ՏՂՈՑ

Բազմարդիւն Մամուրեան էֆ ի աշխատասիրութեամբ Իզմիրի Տէտէեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայեալ 248 երեսէ բաղկացած պատուական գիրք մէ, որ կրնայ հեղինակին ասկէ առաջ հրատարակած «Նոր ընթերցարան»ին լրացուցիչ մասը համարուիլ և Ծաղկոցի Բ. Դասի աշակերտաց ծառայել։ Սոյն գործը՝ բաց ի ամենակարեւոր գիտելիքներէ կ'պարունակէ նաև այնպիսի նիւթեր որք ազգ. մանկտւոյն սրտին մէջ ի մատաղ հասակէ հայրենասիրական զգացումներ կը ներշնչեն։

Կը ծախուի Եէնի Ճամի Ջիլինկիրլէր ճատտէսի, Թիւ 2, Ս. Ղուկասեան գրատունը, գին 1 1/2 ֆր։

ԽՕՍՔ ԶՀԱՅՐԵՆԵԱՑ

Վահան Վրդպ. Պօրթուգալեան

Սոյն գիրքը համառօտակի կը խօսի Պոնտոսի և Բարձր Հայոց քաղաքաց և գիւղօրէից, նոյն, Կէսկէս Տաճիկ Հայերու, Թիւրքերու, Քրդերու, Զազաներու, Եէզիտիներու և Բոշաներու, նոցա կենցաղին եւ սովորութեանց վրայ, ևլն. երկիցս գաղթականութեան Ալաշկերտցւոց ևլն. Կը ծախուի գրավաճառաց քով՝ գինն է քառորդ մէճիտ։

Ղալաթիա Դշ. 9 Մայիս

ԸՆԴՀ. ՊԱՐՏ. ԱՐԺ.

Բաց		12.19
Գոց		12 21
Բարձր գին		12.23
Ցած գին		12.19
Թղթադրամ	բաց	1175 20
	բարձր	1185 00
	ցած	1085 00
	ժամը 11	1100.00
Փոխ. 63ի	ֆր.	080.00
» 65ի	»	072.00
» 69ի	»	070.00
» 73ի	»	064.00
Գանձատոմս		20.20
Սօսիէթէ Ժէնէրալ		3 38
Սօսիէթէ Օթօման		3 25
Պանք տը Քօնսթ.		6.10
Քրէտի Ժէնէրալ		4.35
Թրամվէյ		2.35
Ռում. Երկաթուղի		45.50

ԸՆԹԱՑԻՔ ԴՐԱՄՈՑ
(Օսմ. ոսկին 100 [illegible])

Անգղ. ոսկի	109.28
Գաղղ. »	87.26
Բօլ	90.05
Քարպօն արծաթ	17.02
» թղթադրամ	09.00
Քրըմից	51.20
Հինգնոց	13.30
Մէթալիք	15.00
Ճերմակ մէճիտ	06 20
Պղինձ	164.20